"ՖՈՐ ԷՅ ՔՆՍԱԼԹԻՆԳ" ՓԲԸ
ԵՎ
" ԱՐԹԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ " ՓԲԸ
ՄԻՋԵՎ
2018թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 41

ՀՀ Շիրակի մարզ ք. Արթիկ 05 օգոստոս, 2019թ.

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ-ն, այսուհետ՝ "Աուդիտոր", ի դեմս տնօրեն Անիկ Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված ԱԾ սերիայի թիվ 102 լիցենզիայի հիման վրա, մի կողմից և
"Արթիկի Բժշկական Կենտրոն" ՓԲԸ -ն, այսուհետ՝ "Պատվիրատու", ի դեմս գլխավոր տնօրեն Բաբիկ Մարտիրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ "Կողմեր"),
կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Աուդիտորը պարտավորվում է իրականացնել Պատվիրատուի 2018թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների (ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններ), պատրաստված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան, և դրանց կից ծանոթագրությունների աուդիտը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքը և վճարել դրա համար:

1.2 Աուդիտի նպատակն է Աուդիտորի կողմից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի ներկայացումը: Աուդիտը կներառի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարները և բացահայտումները հիմնավորող ապացույցների ընտրանքային հիմունքներով ստուգում, կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված նշանակալի գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում: Աուդիտը կներառի նաև ֆինանսական հաշվետվությունների ներքին վերահսկողության վերաբերյալ ուսումնասիրությունը՝ որպես տվյալ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգերի մշակման հիմք, սակայն Պատվիրատուի ֆինանսական հաշվետվությունների ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք չի արտահայտվի:

1.3 Սույն Պայմանագրի 1.1 և 1.2 կետերում չնշված ցանկացած այլ ծառայություններ, որոնք կհամաձայնեցվեն Կողմերի միջև և կդառնան Աուդիտորի կողմից մատուցման ենթակա, կդիտվի որպես Լրացուցիչ ծառայություններ:

2. ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2.1 Աուդիտը կմեկնարկի 06 օգոստոսի 2019թ.-ից և կավարտվի 30 օգոստոսի 2019թ.-ին:

2.2 Աուդիտորական աշխատանքների ավարտը և այդ աշխատանքների՝ Պատվիրատուի կողմից ընդունման հանգամանքը հավաստվում է աուդիտորական ծառայությունների հանձնման-ընդունման ակտի երկկողմ ստորագրմամբ և հաստատմամբ:

3. ԱՈՒԴԻՏԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ

3.1 Աուդիտորական աշխատանքների ավարտից հետո Աուդիտի արդյունքների հիման վրա Աուդիտորը Պատվիրատուին կներկայացնի աուդիտորի եզրակացություն՝ ՖՀՄՍ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում հաշվետվություն (նամակ ղեկավարությանը)՝ հայերեն լեզվով:

3.2 Ընդ որում մինչև ստորագրված և կնքված աուդիտորի եզրակացությունը և հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը) Պատվիրատուին տրամադրելը Աուդիտորը կարող է ներկայացնել վերոհիշյալ փաստաթղթերի նախագծերը՝ դրանց վերաբերյալ Պատվիրատուի նկատառումները ստանալու նպատակով: Այդ դեպքում Պատվիրատուի նկատառումները պետք է ներկայացվեն Աուդիտորին 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Հաստատված աուդիտորի եզրակացությունը և հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը) Աուդիտորը կտրամադրի Պատվիրատուին վերջինիս նկատառումները ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Աուդիտորի կարծիքի արտահայտման հնարավորությունը և աուդիտորի եզրակացության ձևակերպումը կախված կլինեն Աուդիտորի կողմից աուդիտորի եզրակացության կազմման օրվա

դրությամբ առկա փաստերից և հանգամանքներից և նրա կողմից իրականացված աուդիտորական ընթացակարգերի արդյունքներից: Նման ընթացակարգերի ծավալն ու բնույթը որոշվում են Աուդիտորի կողմից՝ իր հայեցողությամբ՝ հաշվի առնելով համապատասխան հանգամանքները:

4. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1 Սույն Պայմանագրով նախատեսված 2018թ. ֆինանսական տարվա աուդիտորական աշխատանքների արժեքը կազմում է 800,000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, ԱԱՀ-ն՝ 160,000 (հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ: Ընդամենը՝ 960,000 (ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

4.2 Սույն Պայմանագրի շրջանակներում մատուցված աուդիտորական ծառայությունների համար Պատվիրատուն վճարումներ է կատարում ՀՀ դրամով՝ Աուդիտորի կողմից ներկայացված հաշիվների հիման վրա:

4.3 Սույն Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ընդհանուր գումարը Պատվիրատուն վճարում է Աուդիտորին ստորև նշված կարգի և ժամանակացույցի համաձայն.

- ընդհանուր գումարից 480,000 (չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ կվճարվի աուդիտորական աշխատանքները սկսելուց 5 (հինգ) օրվա ընթացքում,
- ընդհանուր գումարի մնացած 480,000 (չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ Աուդիտորի կողմից աուդիտորական եզրակացության նախագիծը Պատվիրատուին տրամադրելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.4 Եթե, Աուդիտի միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան, և Կողմերի միջև ծագած անհամաձայնությունների վերացման անհնարինության դեպքում, Աուդիտորը ի վիճակի չէ ավարտել աուդիտը, ապա աուդիտորական եզրակացություն չի տրամադրվի սույն Պայմանագրի արդյունքում, փաստը կդիտվի Աուդիտորի՝ եզրակացություն տրամադրելու պարտավորության դադարում: Սույն Պայմանագրի լուծման դեպքում (ցանկացած հիմքով), բացի Աուդիտորի կողմից կատարված փաստացի ծախսերի փոխհատուցումից, Պատվիրատուի կողմից Աուդիտորին կատարվող վճարը փաստացի մատուցված ծառայությունների դիմաց որոշում են Կողմերը:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Աուդիտորն իրավունք ունի.

- աուդիտի անցկացման ընթացքում լրիվ ծավալով ուսումնասիրել Պատվիրատուի ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև ստուգել փաստաթղթերում հաշվառված միջոցներից յուրաքանչյուրի առկայությունը,
- ստանալ Պատվիրատուի պաշտոնատար անձանցից աուդիտի ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ բանավոր, գրավոր բացատրություններ և այլ անհրաժեշտ տեղեկություններ,
- Պատվիրատուի համաձայնությամբ՝ գրավոր հարցումներ ուղղել երրորդ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար՝ արժանահավատ աուդիտորական եզրակացություն և հաշվետվություն (նամակ ղեկավարությանը) կազմելու նպատակով,
- աուդիտի իրականացման համար ներգրավել անհատ աուդիտորների և/կամ այլ մասնագետների,
- Պատվիրատուի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն չներկայացնելու կամ աուդիտի պատշաճ իրականացմանը խոչընդոտելու դեպքում հրաժարվել աուդիտորական եզրակացություն և հաշվետվություն (նամակ ղեկավարությանը) տրամադրելուց և միակողմանի լուծել սույն պայմանագիրը:

5.2 *Աուդիտորը պարտավոր է.*

- աուդիտի իրականացման ընթացքում ղեկավարվել Աուդիտի միջազգային ստանդարտների պահանջներով, այսինքն՝ պլանավորել և իրականացնել աուդիտն այնպես, որպեսզի արդյունքում ստացվեն բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական սխալներից,
- բարեխղճորեն և ժամանակին իրականացնել աուդիտորական աշխատանքները, ապահովել աուդիտի ընթացքում ստացված և կազմված փաստաթղթերի պահպանումն աուդիտի անցկացմանը հաջորդող 5 (հինգ) տարվա ընթացքում:

5.3 Պատվիրատուն իրավունք ունի.

- ստանալ Աուդիտորից տեղեկատվություն աուդիտորական գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրական ակտերի և Աուդիտի միջազգային ստանդարտների վերաբերյալ:

5.4 Պատվիրատուն պարտավոր է.

- ապահովել Աուդիտորի աշխատանքային խմբին համապատասխան աշխատանքային պայմաններով,
- Աուդիտորի կողմից պահանջելու դեպքում, նրան ներկայացնել բոլոր հաշվապահական փաստաթղթերի բնօրինակները և դրա վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև ներկայացնել այն աշխատակիցներին, ում Աուդիտորը կարող է ուղղել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկությունների և ֆինանսական հաշվետվություններին վերաբերող ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ հարցերը,
- տրամադրել հավաստիացման նամակ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ,
- չխոչընդոտել Աուդիտորի կողմից աուդիտի պատշաճ իրականացմանը, Աուդիտորին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, բանավոր և գրավոր բացատրություններ,
- չձեռնարկել աուդիտի ընթացքում ուսումնասիրվող հարցերի շրջանակները սահմանափակող որևէ միջոց,
- ժամանակին վճարել Աուդիտորի ծառայությունների դիմաց:
- ձեռնպահ մնալ իր մոտ աշխատանքի ընդունել Աուդիտորի նախկին աշխատակիցներին՝ Աուդիտորի և համապատասխան աշխատողի միջև աշխատանքային պայմանագիրը դադարելուց հետո մեկ տարվա ընթացքում, բացառությամբ Աուդիտորի հետ նախապես համաձայնեցված դեպքերի:
- ապահովել պատշաճ պայմաններ սույն Պայմանագրի 1-ին բաժնում նշված ծառայությունների մատուցման համար, այն է՝ Աուդիտորին ներկայացնել պահանջվող գրավոր հաստատումներ իր կողմից կատարած ներկայացումների վերաբերյալ՝ կապված սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման հետ, այդ թվում, Աուդիտորի կողմից հաստատված ձևով հավաստիացման նամակի միջոցով: Պատվիրատուի ղեկավարության՝ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն պահանջվող վերոնշյալ հաստատումները և այլ հարակից գրավոր ներկայացումները կազմում են ապացույցների մաս, որի վրա Աուդիտորը կհիմնվի Պատվիրատուի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ իր կարծիքը ձևավորելիս:

6. ԱՈՒԴԻՏՈՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման առնչությամբ՝ Աուդիտորը կձեռնարկի նպատակաուղղված միջոցներ՝ պահպանելու իր անկախությունը և ապահովելու իր գործունեության համապատասխանությունը ՀՀ կանոններին և կանոնակարգերին:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Աուդիտորի աշխատանքային փաստաթղթերը հանդիսանում են նրա սեփականությունը: Աուդիտորի աշխատանքային փաստաթղթերում և հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունն առևտրային գաղտնիք է և ենթակա չէ հրապարակման՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

7.2 Աուդիտի իրականացման ընթացքում ստացված և կազմված փաստաթղթերի պատճենները Աուդիտորը կարող է տրամադրել երրորդ անձանց կամ հրապարակել դրանք միայն Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1 Պատվիրատուն պատասխանատու է իր կողմից Աուդիտորին ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի արժանահավատության համար:

8.2 Աուդիտորը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու, ինչպես նաև հարկային պարտավորությունները չկատարելու համար:

8.3 Աուդիտորի պատասխանատվությունը սահմանափակվում է ծառայությունների մատուցման ընթացքում իր մեղքով առաջացած վնասների, ինչպես նաև Պատվիրատուի գործարար համբավն արատավորելու արդյունքում հասցված վնասների հատուցմամբ՝ պայմանով, որ վնասների չափը հաստատված է գրավոր փաստաթղթերով: Ամեն դեպքում Աուդիտորի ընդհանուր պատասխանատվությունը սահմանափակվում է ծառայությունների համար Աուդիտորին

վճարված գումարի չափով:

8.4 Աուդիտորը ազատվում է Պատվիրատուի կողմից ներկայացված ոչ ճշգրիտ, կեղծ կամ մոլորեցնող տեղեկությունների հետ կապված կամ դրանց արդյունքում առաջացած որևէ պատասխանատվությունից:

8.5 Սույն Պայմանագիրը կնքվում է Պատվիրատուի և Աուդիտորի միջև, և միայն Աուդիտորն է պատասխանատվություն կրում սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար: Վերջիններս նախատեսված են միայն Պատվիրատուի համար և ուղղված չեն երրորդ անձանց շահերին:

8.6 Աուդիտորը պատասխանատվություն չի կրում ծառայությունների մատուցման ընթացքում Աուդիտորի աուդիտորական եզրակացությունը, հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը) կամ այլ խորհրդատվություն օգտագործելու կամ դրանց վրա հիմնվելու արդյունքում երրորդ անձանց պատճառված վնասների համար, ներառյալ՝ բայց չսահմանափակվելով Պատվիրատուի դուստր ձեռնարկություններ և/կամ փոխկապակցված անձանց:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Սույն Պայմանագրի հետ կապված բոլոր վիճելի հարցերը Կողմերը կձգտեն լուծել բարեկամաբար՝ բանակցությունների միջոցով, առավելագույնս հաշվի առնելով մյուս Կողմի առաջարկությունները: Կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում, վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքելու պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների լրիվ կատարումը:

10.2 Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել Պատվիրատուի կամ Աուդիտորի նախաձեռնությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով, ինչպես նաև Պատվիրատուի կամ Աուդիտորի կողմից իրենց ստանձնած պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում: Այդ պարագայում մեղավոր կողմը ենթակա է պատասխանատվության ՀՀ օրենսդրության համապատասխան:

10.3 Կողմերից յուրաքանչյուրն սույն Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում, այդ մասին նախապես՝ 15 (տասնհինգ) օր առաջ, գրավոր ծանուցում է մյուս Կողմին:

Սույն Պայմանագրի փոփոխությունները և լրացումները օրինական ուժ ունեն, եթե դրանք կատարված են գրավոր ձևով, երկկողմանի ստորագրված և կնքված են:

Կողմերի իրավաբանական հասցեները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԱՈՒԴԻՏՈՐ
"Արթիկի Բժշկական Կենտրոն" ՓԲԸ	**"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ**
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ ք. Արթիկ Բաղրամյան 2	Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն ք. Երևան, Դավթաշեն 4 թղմ, 13/18 գործ. ք. Երևան 0010 Նալբանդյան 50/136
Բանկային հաշիվը Արդշինբանկ Արթիկ մասնաճյուղ h/h 2470400339430010 ՀՎՀՀ 06107489	Բանկային հաշիվը "Արմսվիսբանկ" ՓԲԸ h/h25000-10351620100 ՀՎՀՀ 00148693
Բաբիկ Մարտիրոսյան Գլխավոր տնօրեն	Անիկ Մարտիրոսյան Տնօրեն
Ստորագրություն Կնիք	Ստորագրություն Կնիք